600.0145.26.04.17

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

26 ապրիլի 2017 թվականի №145Ա
ք.Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 30-Ի №463Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ԳՈՒՄԱՐ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2015 թվականի դեկտեմբերի 30-ի №463Ա որոշմամբ «ԲԻԷՄԲԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) տրամադրվել է «Խաչքար» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ№0589 լիցենզիան (այսուհետ՝ ԼԷ №0589 լիցենզիա) մինչև 2033 թվականի հուլիսի 1-ը գործողության ժամկետով, որից կառուցման ժամանակատվածը՝ մինչև 2018 թվականի հուլիսի 1-ը,

բ) Ընկերությունը 2016 թվականի նոյեմբերի 4-ի №52 գրությամբ Հանձնաժողովին տեղեկացրել է, որ ընկերությունից առանձնանալու է նոր ստեղծվող իրավաբանական անձ, և «Խաչքար» փոքր հիդրոէլեկտրակայանի գույքը անցնելու է նոր ստեղծվող ընկերությանը,

գ) Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության պաշտոնական կայքում զետեղված տեղեկատվության ուսումնասիրությունից հետևում է, որ Ընկերությունից առանձնացման ձևով վերակազմակերպման արդյունքում ստեղծվել է «ՍԵՐԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը, որը՝ իր կանոնադրության համաձայն, հանդիսանում է Ընկերության իրավահաջորդը՝ բաժանիչ (առանձնացման) հաշվեկշռին համապատասխան,

դ) «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ իրավաբանական անձի առանձնացման ձևով վերակազմակերպման ժամանակ լիցենզիան այդ իրավաբանական անձից առանձնացած իրավահաջորդին (իրավահաջորդներին) տրվում է միայն համապատասխան լիցենզիա ստանալու համար նախատեսված կարգին համապատասխան,

ե) Ընկերությունը 2017 թվականի ապրիլի 12-ի №ՎՅ10 գրությամբ դիմել է Հանձնաժողով՝ խնդրելով ուժը կորցրած ճանաչել ԼԷ №0589 լիցենզիան,

զ) Հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգի №3 հավելվածի՝ երաշխիքների ներկայացման կարգի 7-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ Հանձնաժողովը որոշում է ընդունում երաշխիքն ամբողջությամբ Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցելու մասին, եթե Հանձնաժողովը որոշում է ընդունել լիցենզավորված անձի լիցենզիայի գործողությունը դադարեցնելու մասին, և

հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «ա» ենթակետը, 37-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը, Հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգի N3 հավելվածի՝ երաշխիքների ներկայացման կարգի 7-րդ կետի 1-ին ենթակետը, Հանձնաժողովը որոշում է.

1. Ուժը կորցրած ճանաչել Հանձնաժողովի 2015 թվականի դեկտեմբերի 30-ի «ԲԻԷՍԲԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «Խաչքար» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու և նախազգուշացնելու մասին» №463Ա որոշումը:

2. Ընկերությանը՝

1) սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից մեկամսյա ժամկետում «Արդշինբանկ» փակ բաժնետիրական ընկերության 2016 թվականի փետրվարի 12-ի №652-1111 գրությամբ Հանձնաժողով ներկայացված №ԱԲԵՆ16/06-01 երաշխիքի համաձայն երաշխավորված երեք միլիոն հիսուն հազար դրամը 900005028130 հաշվեհամարով փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե.

2) ընդունել ի գիտություն, որ իրավասու է սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
26 ապրիլի 2017թ.
ժամը 16[00]